

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՅԻՄՆԱՅԱՐՑԵՐ

ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության ինստիտուտների համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը: Այն քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման իրական երաշխիք է: Չնայած քննչական և դատական պրակտիկայում այդ միջոցները հազվադեպ են կիրառվում, բայց քրեադատավարական օրենսդրության մեջ դրանց առկայությունն ապահովում է դատավարության խնդիրների իրականացումը:

ՀՀ քր. դատ. օր.-ի 98¹ հոդվածում թվարկված են արդարադատությանն օժանդակող անձանց պետական պաշտպանության միջոցները: Այս միջոցները կոչված են անօրինական ներգործությունից զերծ պահելու այդ անձանց: Թեև տարբեր երկրներում օրենսդրությունը թվարկում է միջոցների իր ցանկը, սակայն դրանք ընդհանուր շատ բան ունեն: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 98¹ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը նախատեսում է պաշտպանվող անձի տարաբնակեցում այլ վայր, «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի 6 հոդվածի 4-րդ կետով ևս նախատեսված է պետական պաշտպանության այս միջոցը: Նույնը վերաբերում է պետական պաշտպանության մի շարք այլ միջոցների: Օրինակ՝ այնպիսի միջոց, ինչպիսին է պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխելը, կամ արտաքինը փոփոխելը, նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 98¹ հոդվածի 1-ին մասի, 9-րդ կետ): Տարբեր երկրների օրենսդրություններում պետական պաշտպանության միջոցների նմանությունը պայմանավորված է նրանց առջև դրված նպատակների նմանությամբ՝ երաշխավորել արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունը:

Պետական պաշտպանության միջոցների թվում նպատակահարմար է նշել ժամանակավորապես անվտանգ վայր տեղափոխելը: Այս միջոցը լիովին արդարացված է այն դեպքերում, երբ արդարադատությանն օժանդակող անձի նկատմամբ առանձնապես ակտիվ ներգործություն է կատարվում նախաքննության և դատական քննության փուլերում: Ընդ որում՝ կարևոր է, թե որն է ներգործության նպատակը (անձին կյանքից զրկելը, մարմնական վնասվածքներ հասցնելը կամ նշվածներն իրականացնելու սպառնալիքը): Կարևորը այդպիսի ներգործության իրականացման բուն փաստն է: Պե-

տական պաշտպանության վերը նշված միջոցը կիրառելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ երբեմն ներգործությունն իրականացվում է միայն կոնկրետ քրեական գործի նախաքննության ու դատական քննության փուլերում, իսկ հետագայում (դատավճիռ կայացնելուց հետո) այդպիսի ներգործության վտանգը բացակայում է: Բացի այդ՝ նման ներգործության ինտենսիվությունը երբեմն ստիպում է իրավապահական մարմիններին ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովելու համար: Այդ միջոցների նշտական իրականացումը նաև դատավճիռի կայացումից հետո անհնար է, և պետք էլ չէ, քանի որ լրջորեն նվազում է նշված անձանց նկատմամբ ներգործության հնարավորությունը: Սակայն օրենքում պետք է նշվի պետական պաշտպանության այդ միջոցի ժամանակավոր կիրառման հնարավորությունը նաև դատավճիռի կայացումից հետո: Մասնավորապես, այդպիսի միջոցների կիրառման անհրաժեշտությունն առաջանում է արդարադատությանն օժանդակող անձի, ինչպես նաև նրա մերձավորների կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգի առկայության դեպքում: Ընդ որում՝ նշված միջոցը պետք է կիրառվի անձի դիմումի համաձայն: Միևնույն ժամանակ, իրավապահական մարմինների պարտականությունների մեջ պետք է մտնի անձին սպառնացող վտանգի մասին նրան ծանուցելը:

Մյուս միջոցը, որն անհրաժեշտ է ներառել պետական պաշտպանության միջոցների շարքում, պետք է լինի անվտանգության լրացուցիչ միջոցների կիրառումը կալանքի տակ կամ պատիժը կրելու վայրում գտնվող անձի նկատմամբ, այդ թվում՝ կալանքի տակ գտնվելու կամ պատիժ կրելու մի վայրից մյուսը տեղափոխելիս¹: Դա պայմանավորված է այն բանով, որ առանձին դեպքերում, կազմակերպված հանցավոր խմբավորման կամ պարզապես հանցավոր խմբի մեջ մտնող անձինք նախաձեռնություն են հանդես բերում և ցուցումներ տալիս, որոնք մերկացնում են կատարված հանցագործության մյուս հանցակիցներին: Միանգամայն պարզ է, որ հանցակիցները անօրինական ներգործության միջոցներ կձեռնարկեն և գործնականում ձեռնարկում են այդ անձի նկատմամբ, որպեսզի ստիպեն նրան դադարեցնել ցանկացած համագործակցություն իրավապահական մարմինների հետ: Ցավոք, այդպիսի անձանց կալանքի տակ գտնվելը երբեմն չի ապահովում նրանց անվտանգությունը, քանի որ նրանք կարող են գտնվել հանցավոր խմբավորման դատապարտված այն անդամների միջավայրում, որոնք կատարել են հանցագործությունը, կամ էլ կալանքի տակ են գտնվում այնպիսի հսկիչների մոտ, ովքեր բարյացակամ են տրամադրված այն կալանավորների նկատմամբ, որոնց տվյալ անձը մերկացնում է: Նման դեպքերում արդարադատության շահերից է բխում իրավապահական մարմինների հետ համագործակցող անձանց համար անվտանգ միջավայր ստեղծելը, այն մասին հոգալը, որ նրանց նկատմամբ որևէ մեկի կողմից սպառնալիք չլինի: Նշյալ

¹ Стѣн Мальцева Н. В. Меры обеспечения безопасности потерпевших и свидетелей из числа осужденных к лишению свободы. Теоретическая проблема уголовно-исполнительного права // "Закон и право", 2006, № 10, էջ 71-72, Тимина Н. В. Меры обеспечения безопасности потерпевших и свидетелей в местах лишения свободы: нововведения в российском законодательстве // Российская пенитенциарная система: актуальные проблемы реформирования. Сборник научных трудов. Владимир, 2005, էջ 219-226:

միջոցը կարող է և առանձին դեպքերում պետք է կիրառվի ոչ միայն նախնական քննության ու դատական քննության փուլերում, այլև դատավճռի կայացումից կամ քրեական գործը կարճելու մասին որոշումից հետո:

Անհրաժեշտ է նշել, որ պետական պաշտպանության արդեն գոյություն ունեցող միջոցը, որը նշված է ՀՀ քր. դատ. օր.-ի 98¹ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում («Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը»), չի կարող բացառել նաև առաջարկվող միջոցի կիրառումը: Դա պայմանավորված է նրանով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 98¹ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված միջոցով ենթադրվում է խափանման միջոց ընտրելը, այլ ոչ թե արդեն ընտրված միջոցի կիրառման առանձնահատկությունները (կալանքի տակ պահելը): Բացի այդ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 98¹ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված միջոցը չի վերաբերում արդեն դատապարտված և ազատագրված վայրերում պատիժը կրող անձանց: Վերջիններիս պաշտպանության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ կան դեպքեր, երբ այդպիսի անձինք, վերախնամապարտվելով իրենց դիրքորոշումը կամ այլ պատճառներով, ցուցմունք են տալիս նախկինում կատարած հանցագործությունների հանգամանքների վերաբերյալ: Լիովին հասկանալի է, որ նախկին հանցակիցները նման դեպքերում ձգտում են ամեն կերպ ներգործել իրավապահայան մարմինների հետ համագործակցության հարցում ակտիվություն ցուցաբերող անձանց վրա: Ուստի պետությունը պետք է ձեռնարկի այդպիսի անձանց անվտանգությունն ապահովելու միջոցներ: Առավել ևս, որ այդպիսի միջոցներն ունեն որոշակի կանխարգելիչ նշանակություն, քանի որ ցույց են տալիս, որ իրավապահայան մարմինների հետ համագործակցող անձինք անպաշտպան չեն, ուստի և նրանց հետ կարելի է և պետք է համագործակցել: Այդ պատճառով նշված միջոցն անհրաժեշտ է հանցագործությունը բացահայտելու հարցում իրավապահ մարմիններին աջակցություն ցույց տալու համար:

Խափանման միջոցի ընտրությունը նույնպես արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովելու միջոցներից է: Այդ մասին ուղղակիորեն նշված է ՀՀ քր. դատ. օր.-ի 98¹ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում: Ի թիվս մյուսների սահմանելով նաև այս միջոցը՝ օրենսդիրը իրավակիրառ մարմինն զինել է արդարադատությանն օժանդակող անձանց անվտանգությունն ապահովելու բավականին արդյունավետ միջոցով: Ակնհայտ է, որ ճիշտ ընտրված խափանման միջոցն ապահովում է արդարադատությանն օժանդակող քրեական դատավարությանը մասնակցող անձանց անվտանգությունը: Իրավաբանական գրականության մեջ այս հարցը նույնպես արժանացել է ուշադրության²: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությամբ այս հարցը լուծվել

² Տե՛ս **Воронов Д. А.** Меры уголовно-процессуального принуждения как средства обеспечения безопасности участников уголовного судопроизводства. Автореф. дис. канд. юрид. наук. Омск, 2008, 22 էջ, **Воронов Д. А.** Меры процессуального принуждения как средства обеспечения безопасности участников уголовного судопроизводства // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе. Сборник материалов XII международной научно-практической конференции (19-20 февраля 2009 г.). Ч. 2. Красноярск, 2009, էջ 188-192:

է: Այդուհանդերձ, ճիշտ կլիներ ՉՉ քր. դատ. օր.-ի 135-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել խափանման միջոց ընտրելու ևս մեկ հիմքով՝ եթե անձը վտանգ է ներկայացնում դատավարության մյուս մասնակիցների կյանքի կամ առողջության համար:

Վերը նշված հիմնահարցերի օրենսդրական լուծումը կնպաստի քրեական դատավարությունում արդարադատությանն օժանդակող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովմանը:

САМБЕЛ ДИЛБАНДЯН – Некоторые проблемы государственной защиты лиц, способствующих правосудию в уголовном процессе. – Для эффективной защиты тех, кто способствует правосудию, важное значение имеют дополнительные средства безопасности в отношении лица, которое находится под стражей или в месте лишения свободы. Это связано с тем, что в отдельных случаях лица, входящие в преступную группу, проявляют инициативу и дают показания, разоблачающие других участников совершенного преступления. В статье предлагается соответствующее дополнение в уголовно-процессуальное законодательство РА.

SAMVEL DILBANDYAN – Some Issues on State Protection of Justice Supporting Persons in Criminal Procedure. – The article discusses some issues on state protection of justice supporting persons in criminal procedure. The latter is a real guarantee to ensure protection of rights and legal interests of persons participating in criminal procedure. The theory and practice of application of these measures are points at issue, especially in regard to the problems of their implementation efficiency and procedure.

To ensure effective enforcement of this institute, the application of additional security measures towards the person who is under arrest or in a place of imprisonment including transfer from one place of detention to another has great significance among state protection measures. It is mainly connected with the fact that in some cases persons involved in organized criminal groups or just criminal groups take the initiative and testify thus exposing other crime participants. In this regard, the author suggests making respective amendment to the RA criminal procedure legislation.